

ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

ՍԵՂՐԱԿ ԹԱՌԱՅԵԱՆՑԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

IV.

Բողոքականները կենդանացած են գլխաւորապէս Շամախու, Բաղլի և Շուշու մէջ, ուր սորա մէկ-մէկ եկեղեցիներ (Ժողովարաններ) և դպրոցներ ունին: Բայց սկսել և կամաց-կամաց շատանում են նորա Երևանում և Ալեքսանդրոպոլում և այլն: Բացի քաղաքներից նոյնպէս բողոքականութիւնը մուտք է գործած շատ գիւղերի մէջ: Կան գիւղեր, որոնց մեծ մասը բողոքականներ են: Գլխաւորն այն է, որ բողոքականութիւնը օրէցօր աճում է, այն էլ ինչպէս մենք ցոյց ենք տւել, հակալուսաւոր ուղղութեամբ, ու խեղդեանի հիւանդութեան (рабство) նման տարածւելով սպառնում է կործանել ազգային օրգանիզմը (ու թէ միայն լուսաւորչական եկեղեցին):

Մենք ճշմարիտը խոստովանում ենք, որ այստեղ մեզ սարսափեցնողը այն չէ, թէ բողոքականութիւնը կարող է ազդել ազգային եկեղեցու վերայ, կարող է թուլացնել բուն լուսաւորչականութիւնը, կարող է ստիպել նորան փոփոխութիւնների ենթարկւել, կարող է հանել լուսաւորչականի սրտից հաւատընծայութիւնը դէպի իւր սուրբքը և այլն: Կրկնում ենք այդ տարակուսանքները չեն

¹⁾ Տես «Մուրճ» 1893 թ. № 2, 3 և 4:

մեզ իսկապէս զբաղեցնողը: Այլ մեր սարսափը բղխում է շատ աւելի խոր հիմունքներից, քան թէ դաւանական խնդիրներն են:

Բողոքական համայնքը ճշմարիտ լուսաւորութեան ճանապարհի վերայ կանգնեցնելու համար անհրաժեշտ է ներքին և արտաքին գործունէութիւն: Ներքին գործունէութիւնը պիտի բղխէ նոյն ինքն բողոքական երիտասարդութեան աւելի զարգացած ներկայացուցիչներից, իսկ արտաքին գործունէութիւնը պիտի լինի մեր ընդհանուր ինտելիգենցիայի պարտաւորութիւններից մէկը, որին պիտի մասնակցէ մասնաւոր հայ հոգեւորականութիւնը: Ներքին ու արտաքին գործունէութիւնների վերայ խօսեմը առանձին առանձին:

Ներքին գործունէութիւնը պէտք է սկսել նախ ևառաջ Բագուի մէջ երեք պատճառներով: Առաջինը, որ Բագուի մէջ կան մի շարք քիչ թէ շատ զարգացած բողոքական երիտասարդներ, որոնցից և պիտի բղխէ գործունէութեան նախաձեռնութիւնը: Երկրորդ՝ այնտեղ կայ ընդհանուր ազգային ինտելիգենցիա, որը կարող է զանազան միջոցներով նպաստել բողոքական երիտասարդների աշխատութիւններին: Վերջապէս երրորդ՝ Բագուի մէջ բողոքականութիւնը այնքան մոլեռանդ և բթամիտ չէ, որ կարողանայ շատ մեծ արգելքներ յարուցանել, ուստի սոցա մէջ արած գործունէութիւնը երիտասարդների համար մի տեսակ նախապատրաստական դպրոց կը հանդիսանայ, ուր փոքր ի շատէ վարժւելով և ամրապնդւելով նոքա ոյժ կունենան մոտեցիկ և նամակու, Շուշայ և այլ տեղերի համայնքների մէջ:

Բայց ի՞նչպէս սկսել: Կան մի շարք բողոքական երիտասարդներ, որոնք թէ դպրոցական կրթութեան և թէ ինքնակրթութեան միջոցով կարողացել են փոքր ի շատէ լուսաւոր աշխարհահայեցողութիւն ձեռք բերել: Սոցանից իւրաքանչիւրը առանձին վերցրած մի համեմատաբար աւելի լուսաւորւած անձնաւորութիւն է: Բայց սոցա աչքի ընկնող թերութիւնը այն է, որ իւրաքանչիւրը միայն իրան է համարում զարգացած մարդ, իրանից դուրս ոյժ չէ ճանաչում, որի հետ արժէր միանալ: Խօսքը մեր մէջ մնայ՝ հենց ամբողջ հայ ինտելիգենցիան վարակւած է այդ ինքնահաւանութեան ախտով, որը տասնապատիկ թուլացնում է մեր գործունէութեան քայլերը: Ահա չիշեալ բողոքական պանդոններին ենք դի-

մում, որ սոքա ի սէր մարդկութեան, ի սէր ընդհանուր յառաջադիմութեան դէն դցեն ինքնահաւանութեան զղւանք յարուցանող շապիկը, լայն բանան իրանց աչքերը տեսնելու համար, որ առանց թերութեան մարդ չկայ աշխարհում, որ իրանք էլ նոյն երկաշքանի, երկոտանի արարածներն են: Անհրաժեշտ է մի փոքր ներողամտութեամբ վերաբերել դէպի միմեանց, յարգելով անհատական ճաշակի, մտքի, զղացմունքի, բնաւորութեան առանձնայատկութիւնները: Այդպիսով շատ հեշտութեամբ միութիւն յառաջ կը դաջ միեւնոյն ձգտումները ունեցող, միեւնոյն լուսաւորութեան դրոշակին ծառայող, բայց զանազան առանձնայատկութիւններ ունեցող անհատների մէջ: Բողոքական երիտասարդի միւս մեծ թերութիւնը վախկոտութիւնն է (որը նոյնպէս մեր ինտելիգենցիայի յատկանիշն է): Ընթէ այդպէս անես, այն ինչ արդեւքին կը հանդիպես, եթէ այն անես, այս ինչ դժւարութիւնը կը գտնես և այլ սրանց նման անմիտ գանգատներ: Ոչինչ չարած իզուր վախենալ, ահա ընդհանրապէս հայ ինտելիգենցիայի պատկերը, որ մանաւանդ արմատացած է բողոքական երիտասարդների մէջ, որոնք հէնց ի մանկութենէ սովորած են այն անմտութեանը, թէ բոլոր առաքինութիւնների հիմքը վախկոտութիւնն է. բայց, պարոններ, ժամանակ է հակառակ եղրակացութեան դալ, այսինքն ըմբռնել, որ բազմաթիւ անբարոյականութիւններ հէնց վախիցն են ծագում: Վախն է մարդկութեան թեւերը փշրում: Հէնց որ մարդիկ դադարեն վախենալ, երկրագունդն էլ կը դադարէ թեքւած վազել արեգակի շուրջը:

Մեր լուսամբիս երիտասարդները միմեանց ձեռք մեկնելուց յետոյ անմիջապէս պիտի դնեն իրանց այն հարցը, թէ ինչ դիրք բռնել համայնքի մէջ, ինչ ուղղութեամբ մղել նորան դէպի յառաջ: Ուստի դորա վերայ կանգ կառնենք:

Նախ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այն երիտասարդների վերայ, որոնք իրանց ժամանակը և ոյժերը փչացնում են քէթերի մէջ: Պէտք չէ կարծել թէ սոքա բոլորովին փչացած են, թէ նոքա չեն կարող օգտակար անդամներ լինել համայնքի, ազգի և մարդկութեան համար: Ո՛չ պարոններ, լաւ նայեցէք, լաւ քննեցէք և պիտի օտարոտի եղրակացութիւնների հասնէք: Դուք պիտի տեսնէք,

որ գինիմոլների, ընկածների մէջ նոյնպէս արտացոլում է մարդկային բարձր պատկերը: Նոքա չեն կազմում մարդկութեան կեղտը, այլ գուցէ նոքա մի-մի գոհարներ են որ աննպաստ քամիների ոյժից թափւել են տիղմի մէջ: Երբեմն կեանքի ապականւած անկիւններում աւելի բարձր սրտեր և մողեր են գտնւում, քան թէ ծաղկազարդ դարչիճներում, ուսումնական կաբինետներում և բարոյականութեան ասպարիզում: Երկնային ուսուցչապետը աշակերտներ էր որոնում ձկնորսների և ընկած կանանց մէջ... և նա շատ լաւ գիտէր, թէ ի՞նչ էր անում: Մօտեցէ՛ք ուրեմն իոցա, միք փախչի՛լ նոցա կեղտոտ հագուստներից, չսանրած մազերից, նոցա անմաքուր լեզուից, նոցա մերթ կոպիտ պատասխաններից: Մտնում են նոքա տրակտիր, հետեցէ՛ք նրանց: Գնում են հասարակաց տուն—վազէ՛ք նոցա յետեցից: Բռնեցէ՛ք սիրով և կամքով նոցա կռներից և դուրս հանեցէ՛ք անբարոյականութեան ձորերից: Զարթեցրէ՛ք նոցա սրտում մարդկային արժանաւորութեան զգացումը, վառեցէ՛ք նոցա հոգոյ խորքերում յառաջադիմութեան ճրագակալը, բարձրացրէ՛ք նոցա միտքը, նրբացրէ՛ք նոցա ճաշակը, դարձրէ՛ք նոցա աչքերը դէպի իրանց ճնշւած եղբայրները: Արէ՛ք այդ բոլորը և նոքա կը դառնան ձեր ընկերները: Այն ժամանակ դուք շնորհակալութեան արժանի կը լինէ՛ք: Այնուհետեւ հարկաւոր է մտնել ժողովրդի, այս տասնեակ (? Խմբ.) տարիների ընթացքում բթացրած, ճնշած, տգիտացրած ամբոխի մէջ: Նորից պէտք է թարմացնել, միտք տալ, վստահութիւն և քաջութիւն ներշնչել, մտածել և դատել սովորեցնել, իրական ճշմարիտ աշխարհայեցողութիւն տալ նորան: Բայց ի հարկէ միւս կողմից բոլորովին պէտք չէ վիրաւորել նորա զուտ կրօնական զգացմունքները, թեթեւոյիկութեամբ չխօսել այնպիսի կրօնական-բարոյական ճշմարտութիւնների մասին, որոնց չէք կարող հերքել: Հարկաւոր է զգուշանալ մանաւանդ աւետարանի, այդ գրքերի գրքի վերայ ծաղրական և անմիտ քարեր գցելուց: Դուք կարող էք կարդալ աւետարանը, և բացատրել այս ու այն սկզբունքը, որպէս դուք ըմբռնում էք, որպէս թոյլ է տալիս լուրջ տրամաբանութիւնը: Բայց անմտութեամբ նւաստացնել այս ու այն աւետարանչին, ներելի չէ ոչ մի զարդացած երիտասարդին: Զեր գլխաւոր աշխատութիւնը պիտի լինի մտածել և իւր իսկական շահերը հաս-

կանալ սովորցնել ժողովրդին, կանգնեցնել նոցա առջև գիտութեան դրոշակը, ծանօթացնել նոցա մարդկութեան հանճարի բարձր ստեղծագործութիւնների հետ: Այդ բոլորից յետոյ ջուրը իւր ճանապարհը կը գտնէ:

Առանձին ուշադրութիւն դարձնելու է նոյնպէս կանանց դասակարգի վերայ: Լուսաւորչական կինը արդէն ընկերութիւններ է հիմնել, դպրոցներ է կառուցել, հային բեմ է նւիրել... Հայ օրիորդը սկսել է մրցել երիտասարդի հետ իւր կրթութեան և հասարակաց գործունէութեան ասպարիզի մէջ: Իսկ բողոքական կինը զեռ չէ մտածում դուրս գալ թրքական չարսաւի տակից, բողոքական օրիորդը իւր երգարանից և ստոր հնազանդութիւնից դուրս ոչինչ հասկանալ չէ փորձում: Հարկաւոր է շփուել սոցա հետ, բաւական է որքան կեղծ ամօթխածութիւնից դրդւած երիտասարդները զուրկ թողին սոցա բարերար ազդեցութիւնից: Ժամանակ է նրանց ևս քննութեան առարկայ դարձնել, ժամանակ է մատնացոյց անել նոցա իրանց համազգի ընկերուհիների գործունէութեան վերայ:

Մենք ցոյց տւինք մինչև այժմ գործունէութեան գլխաւոր սկզբունքները, որոնցով պիտի ղեկավարեն բողոքական երիտասարդները: Այժմ անցնենք խօսելու ուղղակի առարկայական գործունէութեան մասին:

Մի ժողովուրդին այս ու այն ուղղութիւնը տալու համար շատ մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, թէ նորա մեծ ու մանր հիմնարկութիւնները ինչպիսի մարդկանց ձեռին են գտնուում և ինչպէս են կառավարւում: Այդ ճշմարտութիւնը պիտի անուշադիր չթողնէ բողոքական երիտասարդութիւնը և աշխատէ մի առ մի իւր ձեռքը գցել համայնքի բոլոր գործերը:

Համայնքի ամենազխաւոր հիմնարկութիւնը նորա ընդհանուր խորհուրդներն են, որոնց անվիճելի իրաւունքից է կախած քարոզչութիւնը, դպրոցը իւր գրադարանով, համայնքի ելումուտքը և այլն: Մի ժամանակ այդպիսի խորհուրդները ճիշտ որ քիչ թէ շատ իրանց դերը կատարում էին, նոցա մէջ քննւում և վճռւում էին ընդհանուր խնդիրները: Բայց բողոքական երիտասարդութեան վերածնութեան տարիներից սկսեալ համայնքի հոգաբարձուները փոխեցին իրանց գաղափարը ընդհանուր խորհուրդներին մասին...

Մինչև այն ժամանակ խորհուրդների մէջ կարողացել էին մեր խանական տրամաբանութիւն ունեցող աղաները անկոնտրոլ կերպով բացականչութիւններ անել, բարբառել իրանց քէֆի ուզածը և լեզւի սիրածը: Բայց աւաղ... ժամանակը սկսեց փոփոխութեան ենթարկուել... Յայտնեցան երկաթէ ձուեր ածող հաւերը: Լոյս ընկան երիտասարդներ, որոնք առանց կարմրելու և ամաչելու անաչառութեամբ քննադատում էին իւրաքանչիւր արտայայտւած խօսք, ճշմարտութիւնը ամենայն պարզութեամբ ներկայացնում էին աղաների մտաւոր և բարոյական սնանկութիւնը: Կործանել էին ձգտում ամեն բան, ինչոր տգիտութեան դրոշակակիրները աշխատում էին կառուցանել ի ֆինաս համայնքի, ազգի և մարդկութեան: Ինչպէս կարելի էր ուրեմն այլ ևս դիմանալ, ինչպէս կարելի էր շարունակել այն խորհուրդները, որտեղ երիտասարդները համարձակւում էին փակել այնպիսիների բերաններ, որոնք տասնեակ տարիների ընթացքում լայն բացւած էին եղել: Գրիստոնեայ խաները բնազդով ըմբռնեցին, որ այդ հոսանքը չլաւ տեղ չէ տանում, ուստի ամեն ջանք գործ դրեցին խորհուրդները խափանելու կամ թուլացնելու նոցա նշանակութիւնը: Մեզ ինչու համար են պէտք ընդհանուր խորհուրդները, ուր իզուր արտեր են վիրաւորւում: Մեզ ինչ մեծ գործեր ունենք, որ մի քանի ընտրեալ եղբայրները չկարողանան կատարել: Ո՞րոնք են մեր գործերը, Դպրոցը... ինչպէս կը լինի՝ կը սովորեն էլի երեխաները, կը մեծանան յետոյ խելքները կը գայ գլուխները: Քարոզը... էհ, ով որ սոված է, նորա համար ամեն բան էլ համեղ է. իսկ ով որ սոված չէ Աստուծոյ խօսքի համար, թող ուրեմն աղօթք անէ, որ սովածանայ: Գրադարանը... Մեր ամենքիս տանն էլ կայ Վրբոց հանգիստ, «Գրիստիանոսը», «Միստր Մուդիի քարոզները»: Մեր պատահանները, պահարանները, սնդուկները լիքն են սուրբ գրքերով և սաղմոսներով: Ել ինչներիս է պէտք գրադարանը: Ժանգոտած դատողութիւնների, աղաւաղւած մտքի արտադրութիւնների: Որոշւած է, մեզ որքան կարելի է քիչ ընդհանուր խորհուրդներ պէտք է ունենալ: Ջաւադ եղբայրը բողոքում է... Խեղճ, անբաղդ Ջաւադ եղբայր, ինչ ես անում, կնոջ և երեխաների տէր ես, խանութիդ դրութեանը չես նայում... Վաղը, միւս օրը մուրհակներ կունենաս ստորագրել տալու, բանկե-

րից օգտւելու հարկաւորութիւն կունենաս: Բայց մոռանում եմ, որ քո արտասանած մի անդգոյշ բառը կարող է քեզ զրկել ամեն տեսակ օգնութիւններից: Ձեռ մտածում, որ դու ստիպւած կը լինես խանութի ծախել և գաղթել դէպի յետ, որտեղից որ եկել ես: Ձաւադ եղբայրը պապանձւում է:

Այդ բոլորի հետեանքն է, որ վերջին տարիներս համարեա երբէք ընդհանուր խորհուրդներ չեն կայանում: Իսկ տարին մի երկու անգամ կայացող խորհուրդների վերայ էլ աղաները իրանց քթի տակին ծիծաղում են, որովհետեւ այնտեղ ներկայանում են միայն իրանց ստորադրեալ պրիկաշիկները, փեսաները, խնամիները և հանգցրած գէջի նմանող պապանձեցրած եղբայրները: Երիտասարդութիւնը վաղուց է զզւել նոցա խորհուրդներից: Իսկ աւելի կարեւոր խնդիրներ եղած ժամանակ մեր աղաները ընտիր հնարներ գիտեն: Նոքա ժողովրդին խորհրդի են հրաւիրում ոչ թէ ժողովարան... Էհ միեւնոյն չէ... այլ իրանց առւն, ուր պատրաստ է զայմադով սուրճը հանդերձ պաքսիմատով, յետոյ էլ աքուլայ բրինձի փլաւը սպիտակամիս ճտիկներով և ոսկեգոյն սերկելիով: Օ Պլատոն, օ Արիստոտելէս, նոյն իսկ ձեր համոզմունքը կարող էինք մենք թունաւորել մեր իւղակաթ փլաւներով և քաղցրանոյշ սուրճերով, ուր քնաց մի որ և է Գասպար եղբօր իւր կարծիքներով: Աշամաձայն եմ պատասխանում է առանց երկար մտածելու ամեն մի առաջարկւած կարծիքին Գասպար եղբայրը, և ճտի փափուկ բուդը բերանը խրում: Օ, հնարագէտներ:

Անհրաժեշտ է վերանորոգել ընդհանուր խորհուրդները, և այդ դժուար չէ: Եթէ երիտասարդները նախապէս իրանց մէջ համաձայնութիւն կայացնեն, նոցա կը միանան և շատ հասակաւորներ: Ապա հնարաւոր կը լինի հաւաքական ձայներով պահանջել հոգաբարձուներից, որ նոքա կանոնաւոր խորհրդաժամեր նշանակեն: Եթէ այս խորհուրդներին փութաշանութեամբ մասնակցեն երիտասարդները և օգտւեն իրանց մտածելու և խօսելու ընդունակութիւնից, փոքր առ փոքր նոքա կը ժողովեն իրանց շուրջը թէ երիտասարդութեան և թէ հասակաւորների ահազին մեծամասնութիւնը: Մենք հաստատ հաւատում ենք այդ յոյսերի յաջողութեան, որովհետեւ մեր կողմն են լոյսը, միտքը, տրամաբանութիւնը, իսկ մեր

հակառակորդները հենւում են մթութեան, տգիտութեան և բթամտութեան վերայ:

Խորհուրդները կանոնաւորելուց յետոյ հարկաւոր է ձեռք առնել մի շարք բարեկարգութիւնների համայնական գործերի մէջ: Ի հարկէ նախ և յառաջ ամենայն ջանք գործ դնելու է յետադէմ հոգաբարձուներին և ուսուցիչներին հեռացնելու կամ նոցա նշանակութիւնը մինչև մինիմում թուլացնելու համար: Այդ շատ հեշտ է, բաւական է, որ երիտասարդները իրանց մէջ երկրորդական խընդիրների առիթով երկպառակութիւններ չծաղեցնեն:

Առանձնապէս հարկաւոր է ուշադրութիւն դարձնել դպրոցական գործի վերայ: Մեր համոզմամբ անհրաժեշտ է որ բոլորքական երեխաների համար առանձին դպրոցներ գոյութիւն ունենան, որովհետև նախ սոցա միայն ամբողջ համայնքը հաւատ կընծայէ, իսկ որ ամենագլխաւորն է, բոլորքական երեխային նախ քան դաստիարակելը հարկաւոր է մաքրել բոլոր այն ճգնաւորական տպաւորութիւններից, որոնց ենթակայ է եղել նա ընտանիքում և շրջապատողների մէջ: Առհասարակ բոլորքական երեխաներին դաստիարակելու համար ուսուցիչները պիտի ունենան առանձին հմտութիւններ և յարմարութիւններ, հետեւապէս աւելի լաւ է հէնց առանձին դպրոց էլ ունենալ:

Բայց այդ դպրոցները պիտի հիմնովին վերափոխութեան ենթարկւեն: Նախ հարկաւոր է ազատել մանկան դաստիարակութիւնը քարոզիչների թմրացնող ազդեցութիւնից: Նոցանից պէտք է պահանջել որ գլուխները քաշ զցեն և իրանց քարոզներով զբաղւեն: Իսկ դաստիարակութիւնը պէտք է յանձնել իսկական ուսուցիչներին և ուսուցչուհիներին, որոնց ընտրելու ժամանակ հարկաւոր չէ դաւանութեան զանազանութեանը նշանակութիւն տալ:

Նոյնպէս կարևոր ուշադրութիւն է հարկաւոր դարձնել ընթերցանութեան գործի վերայ: Գրադարանները առանձին խնամքով պէտք է հարստացնել և զիրք տալու պայմանները այնպէս յարմարացնել, որ ամենայն տիպ բոլորքական բանւորն էլ օգուէ դրադարանից: Սորա հետ զուգընթաց լաւ կը լինի տարածել ընտանիքների մէջ ազդեցիկ գրաւածքներ թէ վաճառելով և թէ նւէրներ տալով: Վերջին տարիներս օրինակ լոյս են տեսել բազմաթիւ էփա-

նազին բայց օգտակար բովանդակութիւն ունեցող գրքոյկներ: Այդ գրքոյկները մուտ չեն գործել և ոչ մի բողոքական ընտանիքի մէջ: Դժուար է ձեռք բերել այդ գրքոյկներից և հէնց ձրիաբար տարածել ընտանիքների մէջ: Աշխատել է հարկաւոր նոյնպէս, որ մեր մամուլի աւելի յառաջադէմ օրդանները տարածւեն համայնքի մէջ: Իսկ նոցա, որոնք բաժանորդ դառնալու միջոցներ չունեն, պէտք այնուամենայնիւ թէ գրադարաններից և թէ մասնաւոր մարդկանցից վերցնելով տալ կարդալու: Ինչ վերաբերում է մանուկների ընթերցանութեան, այդ մասին հոգալը դպրոցների պարտաւորութիւնն է, բայց և երիտասարդները կարող են զանազան միջոցներով նպաստել մանկական ընթերցանութեան գործին:

Բայց այդ բոլոր աշխատութիւնները ջանձն առնելու համար բողոքական երիտասարդութիւնը պիտի ոյժ ունենայ իւր մէջ և մինչև անգամ օրէցօր զօրեղացնէ իւր մտաւոր և բարոյական ոյժերը: Սորա համար մօտիկ յարաբերութիւն պէտք է ունենալ ընդհանուր հայ ինտելլիգենցիայի հետ: Մասնակցելով ընդհանուր հասարակական գործերին՝ դուք բողոքականներդ աւելի եռանդ կը ստանաք, աշխատութեան աւելի նուրբ միջոցներ կը սովորէք և վերջապէս հարկաւոր ժամանակ նոյնպէս իրաւունք կունենաք օգնութեան կանչելու ազգային ինտելլիգենցիայի աջակցութիւնը: Բայց որ գլխաւորն է, նոցա հետ շփումն ունենալով աւելի լաւ կը մտնէք, թէ ինչ ուղղութեամբ պիտի յառաջ մղէք բողոքական համայնքը, որ ոչ միայն ազգի աւելի բարձր շահերին արգելքներ չյարուցանէք, այլ որ կարողանաք համայնքի անդամներին էլ մասնակից անել ընդհանուր յառաջադիմական ձգտումներին:

Բայց աւելորդ չի լինի, որ մենք քանի մի նկատողութիւններ անենք այն մասին, թէ առհասարակ ինչ ընթացք պէտք է բռնէ ազգը բողոքականների փնասակար գործունէութեան դէմ և նոցա օգտակար ուղղութիւն տալու համար:

Ասելն անգամ աւելորդ է, թէ որ և է բռնի միջոց գործ դնելը կատարելապէս աննպատակ և անմիտ է: Աւելի իրական և ազնիւ միջոցներ է հարկաւոր ձեռք առնել:

Նախ նկատուում է, որ բողոքականութիւնը մազի չափ անգամ է ներմուծուում փոքր իշատէ կրթւած լուսաւորչականների մէջ:

Անգրագէտ և աշխարհքի դրութիւնից անտեղեակ անձինք են հետևում բողոքական միսիոնարներին: Նոյն իսկ այն գիւղերը, որտեղ քիչ թէ շատ բանիմաց քահանայ և եռանդ ունեցող ուսուցիչ կայ, ազատ են մնում կրօնական վարակումներից: Հասկանալի է ուրեմն, որ անպայման օգտակար է վարակել սկսող կամ վտանգի ենթակայ գիւղերում ունենալ զարգացած քահանայ և նոյնպիսի ուսուցիչ և սոցա ամեն կերպով աջակցել: Մեր քարոզիչները աւելի պիտի զբաղւեն ժողովրդին մաքուր, պարզ, հասկանալի իրական ճշմարտութիւններ սովորեցնելով:

Բայց ոչ պակաս անհրաժեշտ է նամախու գաւառի գիւղական դպրոցները բարեկարգ դրութեան մէջ դնել և եթէ հնար կայ այնտեղի բոլոր գիւղերի համար դպրոցներ բանալ և, ուսուցիչների ուժիկները փոքր ինչ բարձրացնելով, քարշել դէպի այնտեղ կարգին պատրաստած ուսուցիչներ: Միշտ հարկաւոր է լաւ զօրքեր ունենալ այն կէտերում, որտեղից թշնամին մտադրում է յարձակում գործել...

Հայ ինտելլիգենցիան նոյնպէս իւր կողմից պիտի աջակցէ յառաջադէմ բողոքականներին, տալով նոցա հարկաւոր խորհուրդներ և միջոցներ գործելու: Օրինակ վատ չէր լինի, եթէ նա միջոց տար հարստացնելու և բարեկարգ դրութեան մէջ դնելու բողոքականների գրատարանները: Հայ ինտելլիգենտները կարող են մտնել բողոքական զանազան շրջանների մէջ և երբեմն հէնց մօտաւոր ընտանիքների մէջ էլ, նոքա կարող էին քննադատելով և սովորեցնելով բաւական ազդեցութիւն անել նոցա մտածողութեան վերայ: Առհասարակ չպէտք է հեռու կանգնել, այլ որքան կարելի է մօտենալ: Դուք տեսնում էք օրինակ Բագլի հայ ինտելլիգենտներին, որ բոլորովին չեն հետաքրքրւում տեղական բողոքականներով, չեն ուզում իմանալ, թէ արդեօք նոքա ինչով են զբաղւած: Այդ անտարբերութիւնը ներքի չէ, որովհետև հետաքրքրւելով, մօտենալով նոքա աւելի լաւ կը ըմբռնէին, թէ ինչ վտանգ է սպառնում սղգի ամբողջութեանը և թէ ինչ միջոցների հարկաւոր է դիմել: Շատ անգամ հայ ինտելլիգենցիան բոլորովին գաղափար չունի, թէ ինչ պէտք է հասկանալ ճիշտ-բողոքական, ասելով: Անշուշտ նոյնչափ տգէտ է մեր ինտելլիգենցիան և հայ կաթողիկոսների և Թիւրքիայում

բաւական տարածւած հայ-աւետարանականների մասին: Բայց, պարոններ, ախր սոքա ամենքն էլ ազգի մասերն են կազմում և կարող էին օգտակար լինել ընդհանրութեանը, եթէ յառաջադէմ ուղղութիւն ունենային: Հենց այդ էր, որ մեզ ստիպեց գրել մեր նկատողութիւնները Անդրկովկասի հայ բողոքականների մասին: Ո՛րքան ցանկալի կը լինէր, որ յայտնւէին մարդիք, որոնք տեղեկութիւններ տային հայոց մամուլին և Թուրքիայի հայ աւետարանականների և նոյնպէս ամեն տեղերի հայ կաթողիկոսների մասին: